



**ՄԱԿ-Ի ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ  
ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԹԵՄԱՅՈՎ**

**ԼԻԱԳՈՒՄԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

**ՎԵՐԱԴԱՐՁ, ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐՈՒԺԻ  
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

**ՀՀ տարածքային կառավարման նախարարության  
միգրացիոն պետական ծառայության պետ  
պրն. Գագիկ ԵԳԱՆՅԱՆԻ**

**ԵԼՈՒՅԹԸ**

**Հոկտեմբերի 3-4, 2013թ.**

**Նյու Յորք**

**Մեծարգո նախագահող,**

**Տիկնայք և պարոնայք,**

Միգրացիան մեր պետության համար համարվում է առաջնահերթ կարևորության հիմնախնդիր: Սոցիալ-տնտեսական տարբեր իրողություններով պայմանավորված՝ անցած դարի 90-ական թվականներից սկիզբ առավ բնակչության զանգվածային էմիգրացիան: Տարբեր գնահատականների համաձայն Հայաստանից արտագաղթել է շուրջ 1,2 մլն մարդ կամ 3,5 մլն բնակչություն ունեցող երկրի մեկ երրորդ մասը: Միգրանտների կողմից տարեկան հայրենիք է ուղարկվում շուրջ 2 մլրդ դոլար, որը կազմում է ՀՆԱ-ի շուրջ 20 տոկոսը: Այդ դրամական փոխանցումները Հայաստանում ապրող շատ ընտանիքների համար եթե ոչ միակ, ապա հիմնական աղբյուր են հանդիսանում: Այս ամենով պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարությունը միգրացիոն գործընթացների կառավարումը ճանաչել է որպես իր գործունեության առանցքային ուղղություններից մեկը և վերջին երեք տարիներին Հայաստանում այս ոլորտում իրականացվել են մի շարք բարեփոխումներ: Ընդունվել է Միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը՝ իր 14 գերակա խնդիրներով, ինչպես նաև դրա իրագործմանն ուղղված 2012-2016թթ. Գործողությունների ծրագիրը, որով նախատեսված է 147 կոնկրետ գործողություն:

Արդյունավետ համագործակցություն է ծավալվել ԵՄ-ի հետ, որը գնալով խորանում և ընդլայնվում է: Մասնավորապես ստորագրվել են ԵՄ-Հայաստան <Շարժունակության շուրջ գործընկերություն> (Mobility and Partnership) քաղաքական հռչակագիրը, վիզաների դյուրացման և ռեադմիսիոն համաձայնագրերը: Այսօր Եվրոպական երկրների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության հարթակներում Հայաստանում իրականացվում են միգրացիոն ուղղվածության 8 ծրագրեր՝ շուրջ 9 մլն եվրո ընդհանուր գումարով: Հայաստանը ակտիվորեն ներգրավված է ԱՊՀ տարածաշրջանում ընթացող ինտեգրացիոն գործընթացներում, համակարգված քայլեր են իրականացվում միասնական աշխատաշուկայի ձևավորման ուղղությամբ և բնակչության տեղաշարժերի կարգավորումը համաձայնեցված քաղաքականությամբ կյանքի կոչելու նպատակով: Այսօր այս տարածաշրջանում է հանգրվանել Հայաստանից մեկնածների շուրջ 75 տոկոսը:

## **Հարգելի գործընկերներ,**

Միգրացիայի և զարգացման համատեքստում Հայաստանի համար խիստ կարևորվում է ինչպես օտարերկրյա պետություններից մեր քաղաքացիների վերադարձը և հայրենիքում նրանց վերաինտեգրումը, այնպես էլ հայկական սփյուռքի ներուժի օգտագործումը:

Հայկական սփյուռքն աշխարհում առանձնահատուկ երևույթ է, քանի որ հայ ժողովրդի 70%-ից ավելին ապրում է Հայաստանից դուրս: Այսօր երկրագնդի բոլոր 6 մայրցամաքների 100-ից ավելի երկրներում գործում են հայկական համայնքներ, որոնք կազմավորված են հին և նոր հատվածներից: Հին սփյուռքը հիմնականում ձևավորվել է 1915 թ. Օսմանյան կայսրության կողմից իրականացված ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ սփռված հայերից, իսկ նոր սփյուռքը՝ սոցիալ-տնտեսական տարբեր իրողություններով պայմանավորված՝ 90-ական թվականներից սկիզբ առած ՀՀ բնակչության զանգվածային էմիգրացիայի արդյունքում, որի պայմաններում անգամ ստեղծվեցին հայկական սփյուռքի նոր գաղթօջախներ:

Հին սփյուռքի հետ կապված ՀՀ կառավարությունը որդեգրել է հայրենիքի հետ կապերի ամրապնդման, սփյուռքի մշակութային նույնության և ազգային դիմագծի պահպանման ու հայ ներուժի հայտնաբերման և Հայաստանի տնտեսության զարգացման համար դրա օգտագործման քաղաքականությունը:

Այդ նպատակներին հասնելու քայլերը կարող են հետաքրքրություն առաջացնել առանձին երկրների համար՝ մասնավորապես այն առումով, որ Հայաստանում 2006թ. ներդրվել է երկքաղաքացիության ինստիտուտ, որը միակողմանիորեն թույլ է տալիս մեր երկրում ճանաչելու սփյուռքի ներկայացուցիչների ՀՀ քաղաքացիությունը (տասնյակ հազարավոր հայեր դարձել են երկքաղաքացի), 1992թ. ՀՀ նախագահի դեկլարությամբ ստեղծվել է «Հայաստան» Համահայկական հիմնադրամ, որը ---- երկրներում ունի իր մասնաճյուղերը: Երեք տարին մեկ պարբերականությամբ Երևանում կազմակերպվում են համահայկական համաշխարհային ընդհանուր համաժողովներ: Դրան զուգահեռ հաճախակի են դարձել ոլորտային միջոցառումների, մշակութային փառատոների ու մարզական խաղերի

կազմակերպումը: Մփյուռքի հետ տարվող աշխատանքներին նոր թափ հաղորդեց 2008թ. ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը:

Նոր սփյուռքի ներկայացուցիչների հետ կապված պետական քաղաքականությունն ուղղված է օտարերկրյա պետություններից ՀՀ քաղաքացիների վերադարձի խրախուսմանը և հայրենիքում նրանց կայուն վերաինտեգրմանը: Զարգացման համատեքստում՝ վերադարձող ՀՀ քաղաքացիները իրենց հետ բերում են նոր գիտելիքներ և հմտություններ, գործարար նոր գաղափարներ, բազմամշակութային թարմ հոսանքներ, ինչը հատկապես կարևոր է բնակչության մոնոէթնիկ կազմ ունեցող Հայաստանի համար: Եվ պատահական չէ, որ վերադարձի գործընթացներին օժանդակումը գերակա խնդիր է ճանաչվել ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգով:

ՀՀ քաղաքացիների Հայաստան վերադարձի և վերաինտեգրման հարցերը ներառված են նաև միջազգային համագործակցության օրակարգում: Ներկայումս եվրոպական 8 երկրներից բաղկացած կոնսորցիումը, որը ղեկավարվում է Ներգաղթի և ինտեգրացիայի ֆրանցիական գրասենյակի կողմից, այդ ուղղությամբ Հայաստանում իրականացնում է երկարաժամկետ ծրագիր:

Ստեղծվել է [www.backtoarmenia](http://www.backtoarmenia) տեղեկատվական ինտերնետային համակարգ, ինչը հնարավորություն է տալիս վերադարձող անձանց էլեկտրոնային կապի հաղորդուղիներով, այդ թվում՝ Skype ծրագրի միջոցով օտարերկրյա պետություններից անմիջականորեն կապվելու Հայաստանի պետական կառավարման համապատասխան մարմնի հետ և իրենց հուզող հարցերի վերաբերյալ ստանալ արագ և հավաստի պատասխաններ:

Բացի այդ, նմանատիպ ծրագրեր են իրականացվում միջազգային և ոչ կառավարական այլ կազմակերպությունների կողմից:

### **Մեծարգո նախագահող,**

Մեր համոզմամբ աշխատանքներն ավելի արդյունավետ կլինեին, եթե վերադարձի և վերաինտեգրման գործընթացների հետ անմիջականորեն առնչվող հետևյալ հարցերին տրվեին լուծումներ.

- Օտարերկրյա պետություններում հանգրվանած բարձր որակավորում ունեցող մասնագետների վերադարձի ծրագրերի իրականացում;
- հայրենիք վերադարձողների կողմից իրենց վաստակած գումարները դեպի տնտեսության իրական հատվածին ուղղելու պայմանների ստեղծում;
- ցիրկուլյար միգրացիայի սխեմաների լայնորեն կիրառում:

Ելույթս ուզում եմ ավարտել կոչ ուղղելով միգրացիայի բնագավառում ակտիվ հանձնառություններ ունեցող միջազգային կազմակերպություններին՝ ներառելու իրենց գործնության օրակարգերում այս հարցերը:

**Շնորհակալություն**